

ИСТОРИЯ

Քաղաքական կացությունը և ազգային կյանքը Կիլիկիայում 1918-1920 թթ.

Մարգարյան Սուրեն Թ.

*պ.գ.դ., պրոֆեսոր, առաջատար գիտաշխատող, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ (Երևան, ՀՀ)
sargsyansuren@yandex.ru*

ՀՏԳ՝ 355/359:930(479.25)

Հանգուցարաներ՝ Կիլիկիա, գաղթ, աշխարհամարտ, քաղաքական դրություն, ազգային կյանք, ինքնապաշտպանություն, Ազգային միություն, կուսակցություն, ազգային պատվիրակություն, լիազոր ներկայացուցիչ:

Политическая ситуация и национальная жизнь в Киликии в 1918-1920 годах

Саргсян Сурен Т.

*д.и.н., профессор, Институт истории НАН РА (Ереван, РА)
sargsyansuren@yandex.ru*

Аннотация. В 1918 году часть спасшегося от геноцида армянского народа, веря в обещания Антанты, в 1919г. начал возвращаться в свои родные очаги Киликии. однако, следуя своим политическим и экономическим интересам, последний не только нарушил эти обещания, но и пожертвовал Киликию кемалистской Турции.

Несмотря на все это и протурецкую политику, проводимую французскими властями, киликийские армяне попытались самоорганизоваться и защитить свое физическое существование, честь и имущество от нападений турецких и курдских бандформирований, однако силы были очень сильны и сильны. они были неравными, и они вынужденно покинули Киликию и обосновались в соседних странах.

Ключевые слова: Киликия, эмиграция, мировая война, политическое положение, национальная жизнь, самооборона, Национальный союз, партия, национальная делегация, полномочный представитель

Political Situation and National Life in Cilicia in 1918-1920

Sargsyan Suren T.

*Doctor of Historical Sciences, Professor, Leading Researcher, Institute of history of NAS RA (Yerevan, RA)
sargsyansuren@yandex.ru*

Abstract. Resume In 1918, part of the Armenian people who escaped the genocide, believing in the promises of the Entente, began to return to their native centers of Cilicia in 1919. However, following his political and economic interests, the latter not only broke these promises, but also donated Cilicia to Kemalist Turkey.

Despite all this and the pro-Turkish policy pursued by the French authorities, the Cilician Armenians tried to organize themselves and protect their physical existence, honor and property from attacks by Turkish and Kurdish gangs, but the forces were very strong and strong. they were unequal, and they were forced to leave Cilicia and settle in neighboring countries.

Keywords: Cilicia, emigration, world War, political situation, national life, self-defense, National Union, party, national delegation, plenipotentiary representative.

Նախաբան

1918 թ. օգոստոսի 30-ին Մուղրոս նավահանգստում, անգլիական «Ազամեմնոն» հաժանավում զինադադարի պայմանագիր ստորագրվեց Թուրքիայի և Անտանտի դաշնության միջև: Դրանով Առաջին աշխարհամարտն ավարտվեց: Աշխարհի ժողովուրդներն ազատ շունչ քաշեցին և անդառնալի կորուստների ցավը սգալով՝ ձեռնամուխ եղան ավերված քաղաքներն ու մյուս բնակավայրերը շենացնելու գործին: Բնակչության թվի հետ համեմատած ամենամեծաքանակ զոհեր տված հայ ժողովրդի ցեղասպանությունից հրաշքով փրկված մի հատվածը, վստահելով զինադադարի պայմանների 16-րդ հոդվածով նախատեսված թուրքական զորքերի Կիլիկիայից

դուրս բերելու որոշմանը և անհիմն հավատ ընծայելով Անտանտի տված խոստումներին՝ 1919թ. սկսեց վերադառնալ Կիլիկիայի իրենց հայրենի օջախները և վերականգնել ավերված տներն ու մոխիրների մեջ թաղված մյուս շինությունները:

1919 թ. հունվարին բացվեց Փարիզի վեհաժողովը, որտեղ ակնհայտ դարձավ Անտանտի երկրների Թուրքիան միմյանց մեջ բաժանելու մտադրությունը: Եթե Մուղրոսի զինադադարը հիմք դրեց Օսմանյան կայսրության փլուզմանը, սպա Փարիզում այն վերջնականապես կործանվում էր: Մակայն դրան զուգահեռ, ինչպես 1919 թ. դեկտեմբերի 5-6-ին Մ. Քեմալի հետ հանդիպման ժամանակ նշել է Ժ. Պիկոն (այսինքն՝

Ֆրանսիան), ինքը կողմնակից է «Միջին Արևելքում, թուրքական մեծամասնություն կազմող հատվածում ուժեղ և անկախ թուրքական պետություն հիմնելուն» [12, էջ 978]: Այս երկակի խաղերից անտեղյակ և գաղափար չունենալով անգամ, թե ինչ նոր աղետների են հանդիպելու և կարծելով, թե փորձությունների ժամանակներն ավարտվել են, միամիտորեն հավատալով դաշնակիցներին՝ կիլիկիահայերը զանգվածաբար սկսեցին վերադառնալ հայրենի եզերքներ: Նրանք ամեն ինչ անում էին իրենց ավերված ու թալանված, ոտնակոխ արված բազմաչարչար հայրենիքը վերստին շենացնելու և բարեկեցիկ ու ապահով կյանք ստեղծելու համար: Արդյունքում՝ 1919-1920 թթ. Ռ. Սակայանի տվյալներով Կիլիկիայի 500 հազար ազգաբնակչության 150-160 հազարը հայեր էին, 100 հազարը՝ թուրքեր, 120 հազարը՝ արաբ-անսարիներ և այլք [13, էջ 86]:

Այստեղ զինակալած «Անտանտի ոգեշնչող տերության»՝ Անգլիային 1919 թ. սկզբներին փոխարինեց Ֆրանսիան: Այդ երկրի վարչական վերահսկողության ղեկավար գնդապետ Բրեմոնը¹ ժամանելով Կիլիկիա հայտարարեց, որ ազատագրված Կիլիկիայում հայերը պետք է «տեղի դառնան իրենց երկրին: Մենք պիտի առաջնորդենք զիրենք, մինչև որ անոնք անին և սկսին ինքզինքնին կառավարելու գործին հաջողիլ» [14, էջ 210] և քանի որ «ինքնավարություն պիտի ունենան, պետք է այժմէն պատրաստվեք վարչագետ մարդիկ երկրին վարչությունը ձեռք առնելու համար» [37, թիվ 46, 3 հունիսի 1919]: Դա առաջացնում է Կիլիկիայի 60 հազար թուրքերի բուռն դժգոհությունը, որոնք հենց այդ ժամանակից սկսեցին պատրաստվել հայերի դեմ պայքարի: Նրանք առավել աշխուժացան, երբ անգլիացի գեներալ Մեջը, ֆրանսիացի գնդապետ Փիոփափը և Սսի կառավարիչ Թեյարդան հայտնեցին, որ զինուժի պակասության պատճառով անհնար է Կիլիկիայի բալոր բնակավայրերը ներառել գրավման գոտու մեջ և կայագոր թողնել այնտեղ [15, էջ 178]:

Այդ ամենի արդյունքում 1920 թ. սկզբներին «Հայկական Հանրապետության սահմաններէն դուրս ապրող լիահոծ հայության միակ կեդրոն»² Կիլիկիայում ապրող ավելի քան 150 հազար հայությունը գտնվում էր շատ ծանր վիճակում. «...ամենքն ալ հալ ու մաշ ու կմախքացած, գոտն դաշտերը, տուներնին քար ու քանդ ի հիսանց...իսկ

կարոտությունն ու չքավորությունը միշտ անբաժան մնաց...Ահա այս է վերապրող հայության բարոյական, նյութական, կրթական և կրոնական վիճակին իսկական կամ համանման պատկերը» [1, ց. 2, գ. 2046, թ. 3]: Ընդհանուր առմամբ ներգաղթից հետո կիլիկիահայերի վիճակն իրենից շատ տխուր պատկեր էր ներկայացնում [3, ց. 1, գ. 811, թթ. 6-15]. ծայրահեղ թշվառություն, սննդի և հագուստի պակաս, անապահով, անորոշ վիճակ. «Տարագրեալները կը հասնին հոս շարան-շարան ամէն օր՝ չափազանց խեղճ վիճակի մէջ: Անոնց երևոյթը շատ սրտակեղեք է: Ոտքերնին բոյիկ, հագուստները կտոր կտոր եղած, գլուխնին մերկ կը հասնին հոս շարունակ: Չորս տարուան տառապանքը գանոնք կմախքի վերածած է: Անոնց աչքերը փոսացած, ծունկերը դողդողուն ու կուրծքը անկարող վեր պահելու համար անոնց մեռելացած մարմինը» [3, ց. 1, գ. 87, թթ. 1-3]: Եվ այս բոլորին մէջ՝ փոխանակ համերաշխ և համագործակցական շինարար աշխատանքի, ներքին ջլատիչ պայքար, պառակտում կար» [16, էջ 332]:

Տեղում հաստատված ֆրանսիական վարչությունը որևէ գործուն միջոց չձեռնարկեց հայերի անվտագությունն ապահովելու և թշվառությունը հաղթահարելու համար: Ավելին, «այժերացի պահակներ այնքան յառաջ գացել են իրենց վատթար վարմունքին մէջ, որ մինչև անգամ կ'արգիլեն տեղացի հայերուն իրարու հետ հայերէն լեզուով խօսելու, բան մը որ շուն թուրքը 500 տարիներէ ի վեր չէր յաջողած» [3, ց. 1, գ. 809, թ. 5]: Խնդիրը նրանում էր, որ Անգլիան Օսմանյան կայսրությանը հաղթելուց հետո ձեռնամուխ եղավ նրա մասնատման գործին: Դրան հակառակ, Ֆրանսիան ձգտում էր պահպանել Թուրքիայի ինքնուրույնությունը: Պատճառը ֆրանսիական կապիտալի կենսական շահագրգռվածությունն էր և գերիշխող դիրքը թուրքական տնտեսությունում: Այսպես, Օսմանյան պարտքի 60,31 տոկոսը (2.454.417.377 ֆրանկ) բաժին էր ընկնում Ֆրանսիային, մինչդեռ Անգլիային՝ միայն 14,9 տոկոսը (577.499,281 ֆրանկ) և Գերմանիային՝ միայն 14,19 տոկոսը (867,583,506 ֆրանկ) [32, էջ 402]: Ֆրանսիան նաև առավելություն ուներ Անգլիայի ու Գերմանիայի նկատմամբ մասնավոր ձեռնարկություններում ներդրած կապիտալներով. Դրանք կազմում էին 50, 58 տոկոսը, երբ Անգլիայինը և Գերմանիայինը համապատասխանաբար կազմում էին 14,36 և 35,06 տոկոսը [33, էջ 475-476]: Այսինքն՝ ինչպես իրավացիորեն նշել է Բեռլինում թուրքական նախկին դեսպան Մուխթար փաշան. «Ֆրանսիայի քաղաքականությունը Թուրքիայի նկատմամբ պայմանավորված էր նրա դրամատերերի բուռն ցանկություններով» [34]:

Ավելին, Ֆրանսիայի շահերը Թուրքիայում և, մասնավորապես, Կիլիկիայում, չէին սահմա-

¹ Գնդապետ Էդուարդ Բրեմոն (1868 - 1948, Փարիզ)՝ ֆրանսիացի սպա, հետազայում՝ գեներալ: 1919 թ. Հունվարից մինչև 1920 թ. սեպտեմբեր եղել է Կիլիկիայի ֆրանսիական վարչական վերահսկողության ղեկավարը:

² Մուշեղ արքեպիսկոպոսի տեղեկագիրը Կիլիկիայի քաղաքական իրավիճակի, Ֆրանսիայի վարած հակահայ քաղաքականության և հայկական կոտորածի մասին, [3, ց. 1, գ. 817, թթ. 19-39]:

նափակվում սոսկ տնտեսական ոլորտով, այլ ընդգրկում էին նաև քաղաքական ու կրթամշակութային ազդեցության ոլորտները (Ֆրանսերենը դարձել էր երկրորդ լեզու մտավորականության համար, 1914 թ. Թուրքիայում գործում էին 500 ֆրանսիական դպրոցներ [17; 35, էջ 145-146]): Ակնհայտ էր նաև, որ 1914-1918 թթ. պատերազմը չխաբիլեց այդ խորը և կայուն համերաշխության հիմքերը. Ֆրանսիան առժամանակ թեքվելով դեպի անգլո-սաքսոնական թևը, հետագայում ևս վերադարձավ Թուրքիայի հետ բարեկամությանը:

Հենց այդ պատճառով էլ չնայած Անտանտի երկրորդ խոշոր տերություն Ֆրանսիայի ներկայացուցիչ Բրենոնը ջերմ ընդունելության արժանանալով տեղի հայության կողմից, սակայն չզրացավ ստահող խոստումներ շռայլել: Նա փաստորեն «մեզ խաբեց, խոստանալով Կիլիկիան կառավարել իբրև հայկական երկիր մը, մեր կեանքին ու պատիվին պահպանությանը երաշխատրելով, ու յետոյ, թողլով որ 20.000 հայեր ջարդուին իր բանակին աչքին առջև» [3, ց, 1, գ. 817, թթ. 19-39]: Հայերը, խանդավառված մոտալուտ ինքնավարության կամ անկախության հույսով, չէին ըմբռնում, որ Ֆրանսիան Կիլիկիայում է հաստատվել ոչ թե իրենց պաշտպանելու և օգնելու, այլ Մերձավոր Արևելքում իր գաղութային քաղաքականությունն իրականացնելու համար. «Մենք լրջորեն կկարծենք, թե ֆրանսիացիք Կիլիկիա եկած են մեզ համար, թե մեզ շնորհակալ պիտի ըլլան մեզ համար եկած ըլլալուն և հետևաբար պարտաւոր են մեզի համար ծառայել մեր հասկցած և մեր դատած եղանակովը» [3, ց, 1, գ. 807, թթ. 19-26]: Այս թյուր մտայնությամբ էլ առաջնորդվելով Կիլիկիայի ազգային մարմինները Հայ Ազգային պատվիրակության լիազոր ներկայացուցիչ Միհրան Տամատյանի գլխավորությամբ հիրավի կարծում էին, թե Ֆրանսիայի շահերը պահանջում են հանդես գալ Հայ դատի պաշտպանության դիրքերից, չկամենալով նկատել ֆրանս-քեմալական մերձեցման գործընթացները, որոնք էլ հանգեցրին կիլիկիահայության նոր ողբերգությանը: Ի դեպ, Կիլիկիայում գործող կուսակցություններն էլ էին արհարհում քեմալական շարժումը և գերագնահատում էին դաշնակից տերությունների հնարավորությունները:

Այդ քաղաքական կարճատեսության հետևանքով տեղերում «արդարությանը արիւնոտ ձեռքերու մէջ մնաց» [37, թիվ 57, 15 հունիսի 1919]: Իշխանության դեկին մնացին թուրք պաշտոնյաները, որոնց «գերակշռող մասը մոլի իյթիհաստական գործիչներ էին» [13, էջ 127]: Թուրք-քրդական զինված խաժամուժը և քեմալիստները շարունակեցին երիտթուրքերի հայաջինջ քաղաքականությունը, քանի որ Կիլիկիան թուրքական տիրապետությունից ազատագր-

վելու պոտենցիալ վտանգ էր ներկայացնում: Օգտվելով առիթից, որ 1920 թ. սկզբներին ֆրանսիական զորքերը սկսել էին դուրս գալ Կիլիկիայից և այն հանձնել Թուրքիային՝ քեմալական ուժերը սկսեցին մեկը մյուսի հետևից գրավել հայկական բնակավայրերն ու արյան մեջ խեղդել վերջիններիս ինքնուրույնության ցանկացած դրսևորում: Ընդամենը երեք-չորս տարի առաջ ցեղասպանության սարսափների գեհեճուկ անցած հայերը շատ լավ ճանաչելով թշնամուն՝ թեև դիմեցին ինքնապաշտպանության, սակայն ուժերը խիստ անհավասար էին և պարտվեցին: Որևէ այլ ելք չտեսնելով՝ հեռացող ֆրանսիական բանակի հետ կենդանի մնացածներն էլ ստիպված լքեցին Կիլիկիան և ապաստանեցին հարևան երկրներում:

Աղբյուրները

Ոչ վաղ անցյալում ցեղասպանության սարսափներն ապրած կիլիկիահայությունը սակայն չէր կորցրել հոգու կորովը և հավատը լուսավոր ապագայի նկատմամբ. «Վերջին դեպքերու ընթացքին հայոց բռնած դիրքը պատճառ եղած էին, որ թիրքերը հայուն այդես չնայէին «սորուկ կեաբուրի» ակնոցով: Հիմա ստեղծութանը խառնուած էր նաեւ տեսակ մը հիւսցում եւ քիչ մըն ալ պատկառանք» [38, թիվ 11, 1927, էջ 134]: Անուղղելի այս լավատեսությունն էլ հենց օգնեց նրանց, որ չնայած մեծաքանակ ու բազմապիսի դժվարություններին, շատ կարճ ժամանակում նրանք կարողանան ոչ միայն գոյատևել, այլև արարել և ունենալ աշխույժ ազգային ու մշկութային առօրյա:

Կիլիկիայի քաղաքական իրադրության և ազգային կյանքի մասին տեղեկություններ քաղել ենք արխիվային նյութերից [1, ց, 2, գ. 2046, թ. 3; 2, ց.1, գ. 52; 3, ց, 1, գ. 87, թթ. 1-3; 4], հուշագրություններից [6; 7; 8; 9; 10], տարբեր քաղաքների պատմագրքերից [18; 19; 20; 21], մամուլից [37; 38; 39; 40 և այլն] և որոշ ուսումնասիրություններից [12; 13; 14; 15; 16; 22; 23; 24; 27; 28; 29 և այլն]: Սակայն, ցավոք, բացառությամբ վերջին տարիներին գրված ուսումնասիրությունների, դրանց հեղինակների մեծ մասն այս կամ այն կուսակցության անդամներ լինելով, ավելի շատ քննադատում են իրար, քան օրյեկտիվ տեղեկություններ հաղորդում: Իհարկե, եղել են նաև իրավիճակներ, երբ Կիլիկիայում գործող կուսակցությունները (ՀՅԴ, ՀՄՌԿ, ՄԴՀԿ և Վերակազմյալ հնչակյան) գործել են նաև համերաշխ, բայց շատ քիչ դեպքերում: Իսկ հեղինակներից ոմանք էլ չեզոք լինելով՝ ավելի հաճախ բավարարվել են միայն ընթացիկ սեպքերն ու անունները թվարկելով: Դա է պատճառը, որ Կիլիկիայի ազգային ու քաղաքական կյանքն ամբողջական և մանրամասն դժվար է ներկայացնել:

Ավելի ընդգրկուն տեղեկություններ ենք քաղել տարբեր պարբերականներում հրատարակված հոդվածներից: Երկրամասի կյանքում համեմատաբար կարևոր դերակատարություն ունեցող Ադանայի Ազգային միությունը, «որում վիճակում էր կարելուր դեր խաղալ կիլիկիահայ կեանքին մէջ, - գրում է Լ. Աճեմյանը, իր դիրքին բերումով, դժբախտաբար ոչ մեկ կերպով արդարացուցած է իր վրայ դրուած յոյսերը: ...Հապճեպ կերպով ընտրուած այս մարմինը ժողովրդական ոչ մէկ հոսանքին համակրանքը կր վայելէ, ոչ մէկ դրական աշխատանք կատարած է ցարդ» [39, Աճեմեան Լ., Գոտյոյներ Կիլիկիոյ մէջ // 19 մարտի 1922]: Մեկ այլ հրատարակման մեջ էլ նշվում է, որ Ազգային միությունում գտնվող մի խումբ կա, որի անդամներից ոմանք «խիստ բարի յարաբերութեանց մէջ են օրուան տէրերուն հետ. այս կերպով անուք, նիւթական շատ բարեգաւառած վիճակ մը ունին...» [39, 22 մարտի 1920]:

Քաղաքական կացությունը և ազգային կյանքը

Կիլիկիայի յուրահատկություններից մեկն այն էր, որ ազգային գործերը Կիլիկիայում տնօրինում ու կառավարվում էին յուրաքանչյուր քաղաքում կազմված ազգային միությունները: Ամենացավալին այս դեպքում այն էր, որ այդ միությունները գործում էին միմյացից անկախ և ինքնագույն: Չկար մի համազգային մարմին, որը ղեկավարեր, ուղղորդեր կամ կորդինացներ այդ միությունների գործերը: Այնինչ, ցանկացած ժողովուրդ, որն ուզում է պետություն վերականգնել, առաջին գործերից մեկն այդպիսի մարմնի ստեղծումը պիտի լինի: Կիլիկիան այս առումով ոչ միայն բացառություն չէր, այլև ավելի քան դրա կարիքն ուներ: Ժամանակն ու պայմանները պարզապես թելադրում-պահանջում էին, որ Կիլիկիայի կենտրոն Ադանայում անհապաղ ստեղծվեր Ազգային Կենտրոնական միություն, որն էլ հենց կդառնար ապագա պետության հիմնաքարը՝ նախապետությունը: Կարևոր էր նաև, որ մյուս քաղաքների ազգային միությունները ենթակա լինեին Կենտրոնական միությանը: Այնինչ, այդ ուղղությամբ որևէ քայլ չձեռնարկվեց, որն էլ հնարավորություն տվեց թուրքերին առանձին-առանձին հեշտությամբ պարտության մատնել դրանց:

Իհարկե, անհրաժեշտ է նաև նկատի առնել այն կարևոր հանգամանքը, որ ստեղծված ծանր ու անապահով իրավիճակի հետևանքով՝ ա) հարաբերությունները տարբեր քաղաքների միջև չափազանց դժվարացել էին, վտանգավոր ու գրեթե անհնարին էին (ամենուրեք վիստում էին թուրք, քուրդ և այլազգի հրոսակներ) դարձել, բ) բացասական դեր էին խաղում նաև հայության մեջ սկսված անգիջում միջկուսակցական զգվռոտոցները, գ) ինչպես նաև Ադանայի Ազգային Կենտրոնական միության անկայուն

վիճակը: Հենց դրանք և մի քանի այլ օբյեկտիվ ու սուբյեկտիվ պատճառներն էլ անհնարին դարձրին ընդհանուր ղեկավար մարմնի ստեղծումը:

Խնամատարական լիազոր ներկայացուցիչ Վ. Քաջբերունին Ադանայի Ազգային միության մասին իր դժգոհությունը հայտնելով «Ժողովուրդ» (հետագայում՝ «Ժողովուրդի Չայն») թերթում գրում էր, որ Ազգային միությունը «քարեացկամ եասսիրութիւնով մը ամէն բան կեդրոնացուցեր է իր վրայ, բոլորը անոր դուռ ափ կառնեն. Շուկայի կռիւները, ընտանեկան անհամաձայնութիւնները և նմանօրինակ խնդիրներ անոր հարոցին մէջ կուգան լուծում գտնել. Ազգային և դիւանագիտական գործերը իրմով կը տեսնուին... Մէկ խօսքով՝ Ատանայի ամէն բանն է ան: Մակայն... Ոչ մեկ գոհացուցիչ լուծում: Գործերուն այս վիճակին պատասխանատու է նաև ժողովուրդը, որ ոչ մէկ հետաքրքրութիւն ցոյց կուտայ դատապարտելի անտարբերութեամբ մը» [40, Քաջբերունի Վ., դէպի Կիլիկիա // 22 հունիսի/5 հուլիս, 1919]: Հոգվածագրի ասելով միությունում չկար աշխատանքի բաժանում, որը կհեշտացներ նրա աշխատանքը: Ամեն օր ժողովներ էին գումարվում և գործ անելու փոխարեն խոսում: Միությունը «խորհելով անշուշտ, որ Կիլիկիոյ շրջանի հայացման և փրկութեան միակ միջոցն է սա...» [40, 22 հունիսի/5 հուլիս, 1919], տարված էր միմիայն դիվանագիտական հարաբերություններով:

Իրավիճակը չնչին տարբերություններով նույնն էր նաև մյուս վայրերում: Այսպես, Սաի Ազգային միությունն էլ, որ վերադարձից հետո երրորդ անգամ վերընտրվեց, նույն վիճակում էր և իրեն ենթակա ու հաշվետու չէր համարում Ադանայի Ազգային միությանը [39, 28 հունվարի 1920]: Նույնը՝ Դեորթ Յուլում էր, որտեղ չնայած որ Ազգային միությունը տասնմեկ հոգուց էր բաղկացած, «գիւնտորակաւ կառավարութեան քով դիրքը այնքան ալ զօրաւոր չէր» [39, 25 փետրվարի 1920]: Մերսինի Ազգային միության մասին էլ խոսելիս Լ. Աճեմյանը նշում է, որ «աղտոտութիւնն ու անխնամութիւնն» էր այստեղ իշխում, սպա ավելացնում է, որ Մերսինի հայոց մեջ «Ռամկավար նորակազմ ակումբը թէ իր քանակով թէ մանաւանդ իր որակով ամէնէն նկատառելի կազմակերպութիւնն է հոս»: Նաև ընդգծում նաև, որ տեղի կաթոլիկ հայերը խիստ բացասական վերաբերմունք ունեին մյուս համայնքների նկատմամբ [39, 17 նոյեմբերի 1919]:

Կիլիկիայի ազգային կյանքում կարևոր դերակատարություն ունեին ազգային չորս **կուսակցությունները**: Բայց դրանք փոխանակ միասնաբար ու համերաշխ գործելով վերականգնեին բնականոն կյանքը Կիլիկիայում, միմյանց հետ կատաղի մրցելով շտապում էին օր առաջ կարևոր դիրքեր գրավել դաշնակիցների կողմից խոստացված ապագա կառավարության

կազմում: Համերաշխ համագործակցում էին միայն Ռամկավար և Վերակազմյալ հնչակյան կուսակցությունները: Սակայն վերջիններիս հարաբերությունները Հնչակյան և մանավանդ Դաշնակցության հետ, շատ հեռու էին բարեկամական լինելուց: Նույն վիճակում էին նաև այս վերջինների միջև եղած կապերը. «*Ընկերային կեանքը անբարձրագույն դիրքը ունի, կուսակցական իրարատեսացությունը հայ հոգիին մէջ բոյն է դրել... Մահուան նախարներէն դարձող ժողովուրդի մը հոգին եղբայրատեսացութեան մոլուցքով է լեցուած...*» [39, Վտարանդի, Կիլիկիեան լուրեր // 10 հոկտեմբերի 1919]:

Արդարության դեմ չմեղանջելու համար նշենք, որ, ինչպես այլ վայրերում այստեղ էլ, անհամերաշխության հիմնական դերակատարը մենաստիքության ձգտող Դաշնակցությունն էր [16, էջ 314]. «*Հինադարի նախօրեակին Տարսուհի հայութեան նուիրատուութեամբ կազմուած էր Հայ Երիտ. Միութիւն մը, որուն շուրջ բոլորած էին բոլոր հոսանքներէն երիտասարդներն ու մեծերը: Առաջին օրերը կը կազմէն իր փայլուն շրջանը, որուն շնորհիւ տեղոյս դաշնակցական կոմիտէին հաջորդեցին ցաւալի օրեր... սկսան երեւալ միութեան գործերուն քայքայման նշաններ: Միութեան անդամները սկսած էին մի առ մի հեռանալ, որուն յաջորդեց ընթերցասրահին ամալութիւնը, ուր սկսան յաճախել խաղամուկներ և գինեմուկներ»* [39, Կեանքը Տարսուհի մէջ // 10 հունիսի 1921]: Դաշնակցությունը նույն կերպ էր վարվում նաև այլ ազգային կառույցների նկատմամբ: Մասնավորապես Հայ բարեգործական ընդհանուր միության, որի պատվիրակ Դավիթ Արամյանը շրջում և տարբեր քաղաքներում հիմնում էր իր կազմակերպության մասնաճյուղերը: Դրանցից Այթափինն ուներ 200, Մարաշինը՝ 500, Տերե Բոյը՝ 50, Պիրեճիքը՝ 52, Ուրֆայինը՝ 63 անդամ, որոնց ժողովուրդը ողջունում էր, սակայն դրանց դեմ Դաշնակցությունը «*հակառակութիւն ցոյց կուտար ամենուրեք»* [39, Աճեմյան Լ., Պտոյտներ Կիլիկիոյ մէջ // 12 մարտի 1920]: Այս ցավալի իրողության ականատես կաթողիկոս Խաչատրյանն ստիպված հատուկ կոնդակով դիմեց ժողովրդին և միասնության կոչ արեց [27, էջ 842], որը սակայն մնաց «*ձայն բարբառոյ յանապատի»*:

Այդ նույն ժամանակ թուրքերը, որոնք խիստ թշնամաբար էին վերաբերում հայերի ներգաղթին և հատկապես Հայկական լեզեռնի կազմվելու փաստին, երբ վերջինիս կամավորները ոտք դրեցին Ալեքսանդրեթի «*հողին վրայ, սկսան խռովութեանց»* [28, էջ 67]: Նրանք հոտառությամբ զգում էին, որ Հայկական լեզեռնը, որն իր ռազմական և պատմաքաղաքական բոլոր յուրահատկություններով հանդերձ, համադրելի էր թերևս միայն Վան-

Վասպուրականի 1915 թվականի հերոսամարտին, ուժգին ու դիպուկ հետհարված էր թրքությանը: Թուրքերի այդ թշնամանքը դեկավարվելով սկզբում երիտթուրքերի, իսկ այնուհետև դրանց գունափոխված տարբերակ քեմալականների կողմից՝ աստիճանաբար ընդարձակվեց և ավելի կազմակերպված բնույթ կրեց: Օրեցօր հզորացող քեմալականներն ամեն ինչ անում էին հայերի կյանքը դժոխքի վերածելու համար: Հայերի սպանություններ էին կազմակերպում, թալան, առևանգումներ և զագրելի այլ արարքներ. «*Մահմետական մոլեռանդութիւնը այսպէս գրգռուելով, ազատ ընթացք ստացաւ եւ հայերը – զինուոր և քաղաքացիներ իսկական պաշարման ենթարկուեցան»* [28, էջեր 147-148]:

Այդ ամենից ահաբեկված հայերը դիմում էին ֆրանսիացիներին և ակնկալում նրանց օգնությունը: Սակայն վերջիններս կամ չնկատելու էին տալիս դրանք կամ սին խոստումներով հանգստացնում էին հայերին: Իսկ երբ 1920 թ. մարտին Լոնդոնում տեղի ունենալիք վեհաժողովին Կիլիկիայի քրիստոնյաների անունից դիմում է ուղարկվում, թուրքերը կատաղում են: Որովհետև դիմումում հիմնավորվում էր այն գաղափարը, որ թե՛ էթնիկական, թե՛ իրավական և թե՛ այլ տեսանկյուններից դիտարկելով Կիլիկիային պիտի տրվի անկախություն: Դիմումը ստորագրել էին Կիլիկիայում գործող ՀՅԴ, ՄԴՀԿ, Վերակազմյալ Հնչակյան և Հայ Սահմանադրական ռամկավար կուսակցությունների, հայ առաքելական, բողոքական և կաթողիկե եկեղեցիների, ինչպես նաև Կիլիկիայի հույն, ասորի, արաբ համայնքների ներկայացուցիչները [41, 21 մայիսի, 1920]:

Բրեմոնը, որը ստիպված ենթարկվում էր իր վերադասի հրամաններին, բայց նաև համակրում էր հայերին, այդ պատճառով էլ 1920 թ. սեպտեմբերին պաշտոնից ետ կանչվեց [42, 30 մարտի, 1951]: Ֆրանսիայի հակահայ քաղաքականությունը դրսևորվեց նաև երբ Բրեմոնին փոխարինած գեներալ Կուրոյի հրամանով տեղացիներից միլիցիա էր կազմվում, հավաքագրում էին արաբներին, քրդերին, չերքեզներին և նույնիսկ թուրքերին, իսկ քրիստոնյաներին, այդ թվում նաև հայերին, խուսափում էին ընդգրկել [2, ց. 1, գ. 52, թթ. 1-2]: Այսինքն, 1920 թ. Ֆրանս-թուրքական մերձեցումից հետո Կիլիկիայի հայության բախտն ըստ էության կանխորոշված էր. հայերին մնում էր մի բան՝ պատրաստվել կենաց և մահու պայքարի կամ լքել հայրենի եզերքները [30, էջ 453]:

Կիլիկիայում ընթացող իրադարձությունների կիզակետում գտնվող Ազգային պատվիրակության լիազոր ներկայացուցիչ Մ. Տամատյանը, քաջածանոթ լինելով ֆրանսիական իշխանությունների քաղաքականության հարափոփոխ ընթացքին «*Հայ Դատին շուրջ ունեցած*

հարստիտիս վերաբերմունքին ու ֆրանսիացիներուն ևս քեանապական թուրքերուն հանդեպ ցույց տալ սկսած բարեացակամ ընթացքին» քայլեր է ձեռնարկում Կիլիկիայի թուրքական իշխանությունների հետ համաձայնության գալու համար «ապահովելու և պաշտպանելու համար հայությանը անոնց սովորական վայրագություններէն» [42, 17 ապրիլի, 1953]: Նրա առաջին քայլը լինում է գնդապետ Բրեմոնի հավանությամբ 1920 թ. ապրիլին հանդիպումը Ադանայի թուրք կուսակալի և թուրք երևելիների հետ: Տամատյանը ներկայացնում է իր մշակած ծրագիրը, որի նպատակն էր նորմալ հարաբերություններ հաստատել Կիլիկիայի հայ և թուրք բնակչության միջև: Վերջ դնել անիշխանությանը և խժոժություններին՝ անկախ այն բանից, թե ինչ որոշում կընդուներ Փարիզի վեհաժողովը Կիլիկիայի վերաբերյալ: «Մարդկայնական և քաղաքակրթական հողի վրա» հիմնված այդ ծրագիրը բաղկացած էր 15 մասից: Ընդգծվում էր բարիդրացիական հարաբերությունների անհրաժեշտությունը, դատասպարտում քաղաքական, կրոնական, տնտեսական և այլ պատճառներով «երկրի մը որևէ մեկ տարրին դեմ ելլելը և մեկը մյուսը ջարդելը» [42, 17 ապրիլի, 1953]: Սակայն դաշնակիցների պրոթուրքական քաղաքականությունից քաջալերվելով՝ թուրքերը շարունակեցին իրենց ջարդարար քաղաքականությունը Կիլիկիայում:

Դա էր պատճառը, որ 1920 թ. մայիսին, երբ Մ. Տամատյանն ստանում է Պոլսի պատրիարքին ուղղված իր նամակի պատասխանը, որով Պոլսից աշխատել էին «Տամատին համոզել, որ հյու-հնազանդորեն ենթարկվի» Կիլիկիայում ֆրանսիական իշխանությունների վարած քաղաքականությանը, իր պատասխան նամակում վերջինս հայտնում է այդ տեսակետին իր անհամաձայնությունը [3, ց. 1, գ., 300, թ. 1]: Ավելին, այդ նույն՝ 1920 թ. մայիսին Տամատյանը հաստատ համոզված էր, որ եթե միջազգային նոր ուժեր չմտնեն, ապա Կիլիկիան չի ազատվի իր ճգնաժամային վիճակից և հայության ապահովությունը կդրվի խիստ վտանգի տակ [3, ց. 1, գ., 300, թ. 20]:

Մեղծված քաղաքական կացությունը քննարկելու և իրենց գործողությունները պարզելու նպատակով Մ. Տամատյանը Կիլիկիայում գործող հայ ազգային կուսակցություններին հրավիրում է խորհրդակցության: Այն տեղի է ունենում իր տանը 1920 թ. հունիսի 23-ին: Ներկա էին ՀՅԴ, ՀՄՌ, Հնչակյան և Վերակազմյալ Հնչակյան կուսակցությունների ներկայացուցիչները և Կիլիկիայի հայ ազգային միության անդամները: Հիմնական խնդիրը ֆրանսիական իշխանությունների անորոշությունն էր և «հայերու հանդեպ ունենալիք վերաբերմունքին հատկապես ճշտված չլլալը» [3, ց. 1, գ., 300, թ. 2]: Հետագա գործողություն-

ների վերաբերյալ խորհրդակցության մասնակիցների կարծիքները բաժանվում են: Օրըստօրե սպառնացող վիճակը նրանց ստիպում էր դնել հայ բնակչության գաղթի հարցը: Կիլիկիայի ինքնապաշտպանության ուժերի հրամանատար նշանակված Ծիշմանյանը՝ գտնելով, որ ուժերն անբավարար են պայքարելու համար, ևս կողմնակից էր գաղթին: Անորոշ դիրք ունեին ՀՅԴ, Վեր. Հնչակյան և ՀՄՌԿ ներկայացուցիչները: Գաղթին դեմ էին Հնչակյան կուսակցության ներկայացուցիչը և Մ. Տամատյանը: Նրանք կողմնակից էին շարունակելու իրենց գործունեությունը [3, ց. 1, գ., 211, թթ. 6-13]:

Զգալով կիլիկիահայությանն սպասվող վերահաս վտանգը, որևէ հույս չկապելով Կիլիկիայի ֆրանսիական իշխանությունների հետ, Տամատյանը կազմում է Կիլիկիայի ինքնապաշտպանության կազմակերպման նախագիծը, որի նպատակն էր պաշտպանել Կիլիկիայի խաղաղ քրիստոնյա ազգաբնակչությանը հարձակվող թուրքական ուժերից: Նկատի առնելով կիլիկիահայության հնարավոր դիմադրության վայրերը, այն բաժանվում է պաշտպանության հինգ շրջանների.

- 1) Ադանա,
- 2) Մերսին-Տարսոն,
- 3) Դեռոթ-Յոլ,
- 4) Հասան Բեյլի-Բադչե,
- 5) Հանն, Չեյթուն, Միս [3, ց. 1, գ., 211, թթ. 6-13]:

Այնուհետև նշվում էին այն միջոցները, որոնցով պետք է իրականացվեր ինքնապաշտպանությունտ: Նախ և առաջ անհրաժեշտ էր ստեղծել զինվորական մարմին, որը պետք է իրականացներ ընդհանուր հրամանատարություն, տեղերում նշանակեր շրջանների հրամանատարներ, զինվորական դատարան, ինչպես նաև ստեղծեր պարենի, առողջապահական, կապի, ֆինանսական հանձնախմբեր և այլ օժանդակ ծառայություններ [31, էջ 197]: Սահմանվում էին նրանց իրավասությունների և պարտավորությունների սահմանները: Փաստորեն սրանով դրվում էր Կիլիկիայի ապագա բանակի հիմքը [31, էջ 197]:

Հայերը սակայն ստիպված էին ենթարկվել Կիլիկիայի ֆրանսիական իշխանությունների ներկայացուցիչների պահանջներին: Գնդապետ Բրեմոնը թեև համակրանք էր տաժում հայերի ու մասնավորապես Տամատյանի նկատմամբ և գիտակցում էր նրա իրավացիությունը, բայց նա էլ ստիպված էր ենթարկվել բարձրագույն հրամանատարությանը և Ֆրանսիայի կառավարության որդեգրած քաղաքական ուղղությանը: Այդ մասին պարզորոշ նշվեց Բրեմոնի հրաժեշտի հավաքույթի ժամանակ, որ Ֆրանսիան Կիլիկիան գրավել է միայն իր շահը նկատի ունենալով [31, էջ 198]: Ուստի պատահական

չէր, որ հենց ֆրանսիական իշխանությունների ջանքերով քայքայվեց կիլիկիահայերի ինքնապաշտպանության գործի երաշխավոր հինգհազարանոց հայկական լեգեոնը:

Առաջ անցնելով նշենք, որ Կիլիկիայի ինքնապաշտպանությունը կազմակերպելու Ազգային միության փորձերը, ինչպես նաև ազգային կուսակցությունների գործունեությունը բավարար չեղան կանխելու համար աղետը: Ֆրանսիական իշխանություններն էլ օգնելու փոխարեն լուրջ խոչընդոտներ էին հարուցում ինքնապաշտպանության մարտիկներին օգնություն հասցնելու համար: Դա է վկայում Սահմանադրական Ռամկավար Ապահին (Պետրոսյան) ուղղված «Արև» թերթի աշխատակցի 1920թ. մարտի 30-ի նամակը, որից պարզ է դառնում, թե ինչպես Հաճնի պաշտպաններին ուղղված 200 հրացանը տեղ չի հասել և թե ինչ էր պետք անել. «Աղանայից մեր ընկերները օգնություն են խնդրում. անմիջապես բացառիկ միջոցներու պետք է դիմենք: Մշտոր մեկ-մեկ Չեյթուն: Մարաշի մեր ընկերները փամփուշտ չունեն: 8-10 ընկեր այժմ Աղանա կգտնուին ամենաթշուառ դրությամբ մեջ: Մալեկեանի հետ տեսնվեցա: Կամ պետք է գործինք այսօր և կամ ուրանանք մեր իղևալը» [4, (Ապահ) ց. 1, գ. 206, թ. 2]:

Ռազմական դաշտ տեղափոխված կիլիկիահայերի ազգային-քաղաքական կյանքում կարևոր դրսևումներից եղավ կամավորական խմբերի կազմակերպումը, որի մասին է վկայում 1920 թ. հուլիսի 20-ին Ապահին հասցեագրված մի նամակ, ուր խոսվում է 200 հոգանոց այդպիսի խմբի կազմակերպման մասին [4, ց. 1, գ. 160, թ. 1]: 1920 թ. հուլիսի 1-ին Աղանայի ինքնապաշտպանության մարմինը միջոցներ է ձեռնարկում նաև զենք-զինամթերք ձեռք բերելու և Կիլիկիա փոխադրելու համար. «Իզմիրում միջոցներ ստեղծել ի նպաստ Կիլիկիո շարժման մեծագույնար ֆոնդ մը ձեռք բերելու համար» [4, ց. 1, գ. 212, թ. 1]:

Այդ ընթացքում Կիլիկիայի որոշ քաղաքներում թուրքերը նախահարձակ լինելով կամ ոչնչացնում կամ դուրս էին մղում հայերին: Ինչպես հայտնում է Տամատյանը, հայերը խնդիր էին դրել ստեղծել 1200-ի չափ կամավորական զորամաս, որը պիտի գրավեր Սիսը, վերացներ Հաճնի պաշարումը. «Մա մեր հնարավորությունն սահմաններում էր, - պարզաբանում էր Տամատյանը, - եթե հաջողուր, մեր կարծիքով կիլիկեան ինքնապաշտպանության հարցը մենք մեր ձեռքով լուծած պիտի ըլլայինք» [4, ց. 1, գ. 212, թ. 12]: Մինչ սեպտեմբեր կազմավորվում են նախ 600 հոգուց բաղկացած, ապա 400 հոգանոց երկու խմբեր, որոնք ձեռնամուխ են լինում առաջադրված խնդիրների լուծմանը: Սակայն կրկին ֆրանսիացիները խանգարում են (ռազմամթերք չեն տալիս, տարբեր վարչական խոչընդոտներ էին ստեղծում խմբերի առաջ և այլն): Առաջին՝ 600

հոգանոց խումբը մի քանի ընդարումներ ունեցավ չեթեական գորախմբերի հետ և այդ պատճառով չկարողացավ օգնել Հաճնին: Ինչ վերաբերում երկրորդ՝ 400 հոգանոց խմբին, ապա Հաճնի վրա արշավանքի հենց սկզբում սեպտեմբերի 22-ին ֆրանսիական 500 հոգանոց ջոկատը զինաթափեց նրանց և տարավ Կաշարաղ: Ճանապարհին նրանց մի մասը փախավ, իսկ մնացած 200 հոգուն սկզբում ֆրանսիացիք բանտարկեցին Մերսինի բանտում, հետո շոգենավով արտաքսեցին Կիլիկիայից³:

1920 թ. գարնանն ու ամռանը Կիլիկիայում հայերի վիճակի և առօրյայի մասին պատկերացում կազմելու համար բորոշ է Աղանայի օրինակը: Այն մեծամասամբ քրիստոնյա քաղաք էր, մշտապես գտնվում էր շրջակա թուրքական շրջանների հարձակման վտանգի տակ: Քաղաքի ինքնապաշտպանության, ինչպես նաև շրջակա դաշտերից հացահատիկի և այլ բերքը ապահով քաղաք հասցնելու համար հայերը ստիպված էին 3-400 զինված խումբ պահել: Այդ խմբից գատ հայ կուսակցությունները 4-500 հոգանոց կռվող ուժ հանեցին շրջակա թուրքերի դեմ, որոնք հարձակողական գործողություններ ձեռնարկելով քեցին չեթեական գորախմբերին և շրջակա թուրքերին, մաքրեցին քաղաքին հարող շրջանները և ազատեցին պաշարված դրությունից [3, ց. 1, գ. 302, թթ. 9-10]:

Վտանգը դրսից վերացավ, բայց վտանգ կար նաև ներսից: Դա Աղանայի թուրք բնակչությունն էր, որոնց հսկելու համար մոտ 500 զինված պահակներ գոր ու գիշեր հսկում էին հայկական թաղամասերը (այս ծառայությունը վճարովի էր): Հատկապես Սսի և Մարաշի անկումից հետո մի քանի հազար գաղթականներ եկան Աղանա և ստվարացրին հայության շարքերը: 1920 թ. հունիսին ֆրանսիական իշխանություններն զգուշանալով Աղանայի վրա քեմալական հարձակման վտանգից, փորձված ապա Շիշմանյանին նշանակում են հայկական ինքնապաշտպանական ուժերի հրամանատար, որը պատվով կատարեց իր խնդիրը: 1920 թ. հուլիսին հայերի ճնշման տակ թուրքերը փախան Աղանայից, իսկ նրանց տներում բնակվեցին գաղթական հայերը [3, ց. 1, գ. 302, թ. 11]: Սակայն իրադարձությունների հետագա զարգացման և ֆրանսիացիների թուրքամետ պահվածքի արդյունքում հայերը ստիպված լլեցին Կիլիկիան և տարածաշրջանը վերջնականապես հայաթափվեց:

Եզրակացություններ

1. Քաղաքական իրադրության և ազգային կյանքի վրա վճռորոշ ազդեցություն ունեցան

³ Տամատյանի հաշվետվությունը Կիլիկիայի ինքնապաշտպանության մասին [3, ց. 1, գ. 302, թթ. 13-14]:

համակիլիկիական դեկավար մարմնի բացակայությունը, ֆրանսիական իշխանությունների վարած թուրքամետ քաղաքականությունը, անհիմն և կույր հավատը Անտանտի երկրների նկատմամբ, ազգային կուսակցությունների միջև փոխադարձ անվստահությունն ու անհամաձայնությունները:

2. 1918-1920 թթ. Կիլիկիա վերադարձած հայությունը մի նոր փորձության ենթարկվեց: Երիտթուրքերի գունափոխված տեսակ քեմալականները, օգտվելով ֆրանսիական իշխանությունների վարած թուրքահանո քաղաքականությունից, չնայած հայերի հերոսական դիմադրությանը, իրար հետևից գրավեցին ու կոտորեցին մի շարք բնակավայրերի հայությանը: Հրաշքով փրկվածներն էլ հեռացան երկրից և վերջնադրոյունքում ողջ Կիլիկիան հայաթափեց:

Վկայակոչված աղբյուրներ և գրականություն

1. ՀԱԱ, ֆ. Պ.-57:
 2. ՀԱԱ, ֆ. 282:
 3. ՀԱԱ, ֆ. 430:
 4. ՀԱԱ, ֆ. 453:
 5. Մաշտոցի անվան Մատենադարան, Արշակ Ալայոյանյանի արխիվ, թղթ. 14, վավերագիր 29, թ. 2 (Հանրնի առաջնորդ Պետրոս Սարաճյանի հուշերը «Հանրն ինչու նահանջեց և ընկավ»):

Արխիվներ

Հուշեր

6. **Թաթարեան Մ.**, Կամաւորի մը յուշերը: – Անթիլիաս, 1960:
 7. **Աշնեան Հ.**, Ատանայի եղեռնը և Գոնիայի յուշեր: – Նյու Յորք, 1956:
 8. **Նօրաշխարեան Լ.**, Չեյթունը 1914-1921 թթ. (Յուշեր): – Ե., 1984:
 9. **Ոսկերչեան Է.**, Կիլիկիան յուշեր (1907-1929): – Հալեպ, 1930:
 10. **Տամատեան Մ.**, *Իմ յուշերս*: – Պէյրուս, 1985:

Գրականություն

11. Հայոց պատմություն, գիրք երկրորդ (XVII դ. երկրորդ կես - 1918 թ.), հ. 3: – Երևան, 2015:
 12. «Յուշամատեան մեծ եղեռնի» (1915-1965): – Պէյրուս, 1965, 1100 էջ:
 13. **Մահակյան Ռ. Գ.** Թուրք-ֆրանսիական հարաբերությունները և Կիլիկիան 1919-1921 թթ.: – Ե., ՀՄՍՀ ԳԱ հրատարակչություն, 1970, 325 էջ:
 14. **Իզմիրլեան Կ.**, Հայ ժողովուրդի քաղաքական նակատագիրը անցեալին և ներկայիս (քննական տեսություն): – Պէյրուս, 1964:
 15. **Գասպարյան Ռ.**, Հայկական կոտորածները Կիլիկիայում: – Ե., 2005, 246 էջ:
 16. **Եսփուճեան Ա.**, Հայ ժողովուրդին անկախութեան պայքարը Կիլիկիոյ մէջ 1919-1921 թթ.: – Գահիրէ, Մատենաշար Հայ ազգային հիմնադրամի, 1977, 1086 էջ:
 17. **Մաֆրաստյան Ռ.**, Մուսթաֆա Զեմալ. պայքար Հայաստանի Հանրապետության դեմ (1919-1921 թթ.):

18. **Պօղոսեան Յ.**, Հանրնի ընդհանուր պատմութիւնը և շրջակայ Գօզա Տաղի հայ գիւղերը: – Լոս Անճելըս, 1942, 857 էջ:
 19. **Չեյթունցեան Նազարէթ Ղ.**, Չեյթունի վերջին դէպքերը (1919-1921): – Ալեքսանդրիա, 1922, 1956:
 20. **Թերզեան Հ.**, Կիլիկիոյ աղէտը: – Կ. Պօլիս, 1919,
 21. **Թերզեան Հ.**, Հանրնի ութամսեա դիւցազնամարտը: – Պուէնոս-Այրէս, 1956:
 22. **Կէնճեան Ա.**, Սոցիալ-դեմոկրատ հնչակեան կուսակցութիւնը և Կիլիկեան ինքնաւարութեան արտը: – Պէյրուս, 1958:
 23. **Պօղարեան Գր.**, Յեղասպան թուրքը: – Պէյրուս, տպարան Ատլաս, 1974 (շապիկին վրայ 1975):
 24. Վկայութիւններ քաղուած հրաշքով փրկուածներու գրոյցներէն: – Պէյրուս, 1973:
 25. **Մահակյան Ռ.**, Թուրք-ֆրանսիական հարաբերությունները և Կիլիկիան 1919-1921 թթ.: – Ե., 1970,
 26. **Գասպարյան Ռ.**, Հայկական կոտորածները Կիլիկիայում, Ե., 2005:
 27. **Եղիայեան Բ.**, Ժամանակակից պատմութիւն կաթողիկոսութեան Հայոց Կիլիկիոյ. 1914-1972: – Անթիլիաս, տպ. Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, 1975, 946 էջ:
 28. **Գարամանուկեան Ա.**, Հայկական լեգեոնը պատմական ու քաղաքական հարցերու լույսի տակ և վավերագրեր: – Պէյրուս, 1974:
 29. **Մանջյան Հ.**, Հանրնի հերոսական ինքնապաշտպանությունը: – Կիրովական, 1991:
 30. **Ճիզմեչյան Մ.**, Պատմություն Ամերիկայի քաղաքական կուսակցութեանց, տպագր. «Նոր Օր»ի: – Ֆրեզնօ, 1930, 572 էջ:
 31. **Տեփոյան Պ.**, Միհրան Տամատեան (1863-1945), Պէյրուս, Չարթօնք ի թերթօն, թիւ 52, 1964, 240 էջ:
 32. **Ллойд Джордж**, Правда о мирных договорах, том II. – М., 1957.
 33. Французские интересы в Турции, Новый Восток, 1923, թիվ 3:
 34. **Боев Ю. А.**, Ближний Восток во внешней политике Франции 1898-1914. – Киев, 1961,
 35. **Кемаль Мустафа**, Путь новой Турции, т. 1, Примечания.
 36. **Gustave Gauthetol**, La France en Syrie et en Cilicie.

Մամուլ

37. «Կիլիկիա» թերթ:
 38. «Հայրենիք» ամսագիր:
 39. «Արև» թերթ:
 40. «Ժողովուրդ» թերթ:
 41. «Ազգ» թերթ:
 42. «Չարթօնք» թերթ:

Сдана/Հանձնվել է՝ 14.03.2022
 Рецензирована/Գրախոսվել է՝ 25.03.2022
 Принята/Ընդունվել է՝ 29.03.2022